ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս Հ.
Անդրեասյան 4
Հեռ.՝ (0269)22031, Էլ. փոստ.՝
vardenis.gegharquniq@mta.gov.am

N 2761

21 օգոստոս 2024թ.

Հարգելի պարոն Ավետիսյան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ը գործունեություն է ծավալում Տրետուք բնակավայրի 05-090-0011-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի տարածքում, որը հանդիսանում է պետական սեփականություն: Նախադպրոցական ուսումնական հաստատությունը կրթում է Վարդենիս համայնքի Տրետուք, Կախակն և Կուտական բնակավայրերի թվով 15 սաների և ապահովում է նշված բնակավայրերի թվով 7 աշխատատեղ: Նախակրթարանը հնարավորություն է տալիս սահմանամերձ հանդիսացող Տրետուք, Կախակն և Կուտական բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաներին կտրել փողոցից և կազմակերպել նրանց առօրյան:

Հարգելի Ավետիսյան այսօր նախադպրոցական ուսումնական հաստատությունը կանգնած է փակման եզրին, քանի որ նշված հաստատությունը լիցենզավորված չէ՝ և լիցենզավորման համար ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման համաձայն՝ նախադպրոցական կրթական ծրագրերի և նախադպրոցական ծառայության իրականացման լիցենզիա ստանալու համար նաև անհրաժեշտ է ներկայացնել սեփականության իրավունքի գրանցված վկայական:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք Ձեր հաշվեկշռում գտնվող 05-090-0011-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը նվիրաբերել Վարդենիս համայնքին, նախադպրոցական հաստատության լիցենզավորման և բնականոն աշխատանքները շարունակելու համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Տրետուք բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի շենքի նշված հատվածը վերանորոգվել է 2015 թվականին՝ բարեգործների միջոցներով, իսկ շենքի մնացած հատվածը քանդված վիճակում է:

Կանխավ շնորհակալություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Կ. ՄԿՐՏՉՅԱՆ**

Կատ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. Աբգարյան